ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«Բնագիտություն», «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների մեթոդական միավորման նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի սեպտեմբերի 3-ին: Մասնակցողների թիվը՝ 9:
Մասնակցողների անուն, ազգանուն՝

1. Անգին Սահակյան
2. Ալինա Թորոյան
3. Անահիտ Անդրեասյան
4. Կարեն Գիժլարյան
5. Ամալյա Խուբլարյան
6. Սուսան Գորգինյան
7. Մարինե Պողոսյան
8. Անուշ Խաչատրյան
9. Տատյանա Սարգսյան

Օրակարգում՝

1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի ներկայացում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
2. Նախորդ մեթոդական միավորման նիստի որոշումների կատարման ընթացքի քննարկում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
3. Ուսումնական պլանով առարկային հատկացված ժամաքանակի և առարկայական ծրագրի հիման վրա ՄՄ անդամ ուսուցիչների կողմից թեմատիկ պլանների մշակման, մեթոդական միավորման նիստում դրանց հավանության արժանացման և ԴԿՏՀ համակարգում լրացման հարցը (զեկուցող՝ տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան):
4. ՄՄ անդամ ուսուցիչների կողմից մշակված ուսումնական նախագծի պլանի քննարկում, դրական եզրակացության դեպքում՝ տնօրենի հաստատմանը ներկայացում, իսկ մերժման դեպքում՝ պատճառների ներկայացում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան):
5. «Երթևեկության կանոններ» իրազեկման դասի կազմակերպում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):

ԼՍԵՑԻՆ 1

Մեթոդական միավորման ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց 2026 թվականի սեպտեմբերի 3-ին նախատեսված մեթոդական միավորման նիստի օրակարգի նախագիծը՝ ներառված երեք հարցերով, զեկուցողներով և քննարկման հիմնական ուղղություններով:

Նշվեց, որ օրակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը, ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթությունները և ընթացիկ աշխատանքային խնդիրները: Ընդգծվեց, որ օրակարգում ընդգրկված հարցերն ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, մեթոդական աշխատանքների համակարգմանը և առաջադրված խնդիրների համատեղ քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 2

Նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ՄՄ ղեկավարն ամփոփեց իրականացված աշխատանքները՝ նշելով, որ նախատեսված գործողություններն ավարտվել են սահմանված ժամկետներում:

Նիստի արձանագրության կազմման և ներկայացման մասով ՄՄ քարտուղար Ա. Խուբլարյանը նշեց, որ այն կազմվել և էլեկտրոնային եղանակով ներկայացվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Քննարկման ընթացքում անդրադարձ եղավ նաև ուսումնական գործընթացի կազմակերպմանն առնչվող մի շարք հարցերի: Հաստատվեց, որ ուսուցիչները ծանոթացել են գործող իրավական ակտերին և ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթերին ու աշխատանքը կազմակերպում են դրանց

պահանջներին համապատասխան: Ամփոփվեցին փոխադարձ դասալսումների, դասաժամերի նախնական բաշխման, դասի պլանի միասնական ձևաչափի և սովորողների գնահատման վերաբերյալ իրականացված աշխատանքները՝ նշելով, որ ՄՄ կողմից ներկայացված առաջարկությունները քննարկվել և հավանության են արժանացել սեպտեմբերի 1-ի մանկավարժական խորհրդի նիստում:

ՄՄ ղեկավարը տեղեկացրեց նաև, որ նախորդ նիստում նախատեսված նախագծային ուսուցման կազմակերպման ուղղությամբ իրականացվել են անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները:

ԼՍԵՑԻՆ 3

ՄՄ ղեկավար Ա.Սահակյանը տեղեկացրեց առարկայական թեմատիկ պլանների մշակման աշխատանքների ավարտի մասին: Նշվեց, որ պլանները կազմվել են ուսումնական պլանով սահմանված ժամաքանակին և առարկայական ծրագրերի պահանջներին համապատասխան՝ պահպանելով միասնական ձևաչափը:

Աշխատանքային քննարկման ընթացքում ճշգրտվեցին թեմաների հաջորդականությունը, նախատեսված ժամաքանակի բաշխումն ու ակնկալվող վերջնարդյունքները: ՄՄ անդամների առաջարկությունների հիման վրա տեղում կատարվեցին անհրաժեշտ լրացումները և վերջնականացվեցին ներկայացված պլանները:

Միաժամանակ նշվեց, որ վերջնականացված թեմատիկ պլանները ԴԿՏՀ նոր համակարգում անհրաժեշտ է մուտքագրել համապատասխան պատուհանի գործարկումից հետո՝ սահմանված կարգով:

ԼՍԵՑԻՆ 4

ՄՄ ղեկավարը տեղեկացրեց, որ 2026–2027 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացվելու է օգոստոսի 27-ի նիստում հավանության արժանացած նախագծային աշխատանքներից 4-ը.

ՀՀ	Ուսուցչի անուն, ազգանուն	Դասարան	Նախագծի անվանումը
1	Սուսան Գորգինյան	7^{բ} (1-ին կիսամյակ)	Աշուն
2	Անգին Սահակյան	8^{ա} (1-ին կիսամյակ)	Երկնային մարմիններ
3	Ամալյա Խուբլարյան	8^{գ} (1-ին կիսամյակ)	Հարթապատկերային զարդաքանդակ

Ներկայացված նախագծերի իրականացման համար անհրաժեշտ էր մշակել և ներկայացնել համապատասխան պլաններ:

Քննարկվեցին ներկայացված նախագծերի պլանները, սովորողների ներգրավվածության նախատեսվող մակարդակը, աշխատանքների կազմակերպման ձևերն ու գնահատման չափանիշները: ՄՄ անդամների կողմից ներկայացվեցին առաջարկություններ և դիտարկումներ: Քննարկման արդյունքում նախագծերի պլանները լրամշակվեցին և վերջնականացվեցին:

ԼՍԵՑԻՆ 5

ՄՄ անդամները քննարկեցին «Երթևեկության կանոններ» իրազեկման դասի կազմակերպման հարցը: Ներկայացվեց դասի նպատակը, բովանդակությունը և անցկացման ձևաչափը: Կարևորվեց սովորողների ակտիվ մասնակցությունը՝ հաշվի առնելով նրանց անհատական կարողություններն ու առանձնահատկությունները:

Լսելով 2026 թվականի սեպտեմբերի 4-ի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մեթոդական միավորումը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել մեթոդական միավորման՝ 5 հարցից բաղկացած օրակարգը և նիստի աշխատանքներն իրականացնել հաստատված օրակարգին համապատասխան: Ապահովել օրակարգային հարցերի քննարկումն ու ընդունված որոշումների կատարումը սահմանված ժամկետներում: Որոշումների կատարման վերահսկողությունը վերապահել ՄՄ ղեկավարին:

2. Նախորդ՝ 2026 թվականի օգոստոսի 27-ի նիստի որոշումների կատարման աշխատանքները համարել իրականացված սահմանված ժամկետներում: Ի գիտություն ընդունել, որ դրանց կատարման շրջանակում մանկավարժական խորհրդի նիստում ներկայացվել և հավանության են արժանացել նախնական դասաբաշխման, սովորողների գնահատման, դասալսումների կազմակերպման և դասի պլանի մշակման վերաբերյալ ՄՄ առաջարկությունները: Արձանագրել, որ ՄՄ անդամ ուսուցիչներն ուսումնասիրել են կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը և աշխատանքը կազմակերպել դրանց պահանջներին համապատասխան, իրականացրել են նախագծային աշխատանքների նախապատրաստական աշխատանքները, իսկ նիստի արձանագրությունը կազմվել և ներկայացվել է սահմանված ժամկետում:
3. Հիմք ընդունելով ՄՄ անդամների և ղեկավարի ներկայացրած առաջարկությունները և ղեկավարվելով ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանով հաստատված Հավելված N 2-ի 12-րդ կետի պահանջներով՝ հավանություն տալ ՄՄ անդամ ուսուցիչների կողմից մշակված առարկայական թեմատիկ պլաններին և դրանց՝ ԴԿՏՀ համակարգում սահմանված ձևաչափով լրացման գործընթացին:
4. Հիմք ընդունելով ՄՄ ղեկավարի զեկույցը և ղեկավարվելով ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի մարտի 25-ի N 09-Լ հրամանի 2-րդ գլխի 9-րդ կետով՝ հավանություն տալ «Աշուն», «Երկնային մարմիններ» և «Հարթապատկերային զարդաքանդակ» ուսումնական նախագծերի թեմաներին: Քննարկել և ուսումնասիրել ներկայացված նախագծերի պլանները, դրանց վերաբերյալ տալ դրական եզրակացություն և ներկայացնել հաստատության տնօրենի հաստատմանը:
5. «Երթևեկության կանոններ» իրազեկման դասը կազմակերպել և անցկացնել սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով սովորողների կրթական առանձնահատկություններն ու հնարավորությունները: Դասի նախապատրաստական աշխատանքների իրականացումը հանձնարարել համապատասխան ուսուցիչներին:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ _____ **Ա. Սահակյան**

Քարտուղար՝ _____ **Ա. Խուբլարյան**

04.09.2026